

Երազիկ Դանիելյան
Արցախի Հանրապետության ԿԳՄՄ նախարարություն
Լուսինե Գասպարյան
«Շուշի քաղաքի թանգարաններ» ՊՈԱԿ

ՃՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Կերպարվեստի պետական թանգարան

Կերպարվեստի պետական թանգարանը հիմնադրվել է հայտնի երկրաբան, պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի կողմից, ում նախաձեռնությամբ էլ հավաքագրվել է թանգարանի հավաքածուն: Թանգարանը պաշտոնապես բացվել է 2013թ. մայիսի 9-ին:

Թանգարանի շենքը կառուցվել է Շուշիի նախկին իջևանատան հիմքի վրա՝ պահպանելով վերջինիս ճարտարապետական առանձնահատկությունները:

Թանգարանի հավաքածուն կազմված էր բացառապես նվիրատվություններից:

700-ից ավելի արվեստանմուշ պարունակող հավաքածուն ներկայացնում էր անվանի արվեստագետներ Դ.Բոտլյուկի, Կ.Զոմմերի, Գառզուի, Է.Շահինի, Ժանսեմի, Հ.Կոչոյանի, Հ.Հակոբյանի, Ռ.Խաչատրյանի, Պ.Կուզնեցովի, Ա.Շևչենկոյի, Ա.Սաֆոյիսի, Դ.Պլավինսկու և այլոց ստեղծագործություններ:

Թանգարանի առանձնահատկություններից էին նվիրատուների հարուստ ցուցակը, որի մաս են կազմում ժամանակակից հայ արվեստագետները, ովքեր իրենց նվիրաբերումներով նպաստել են թանգարանի կայացմանը և ներկայացվող աշխատանքների լայն աշխարհագրությանը՝ Արցախ, Հայաստան, Վրաստան, ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա, Եթովպիա, Ինդոնեզիա, Մադագասկար և այլն:

Կերպարվեստի պետական թանգարանը համարվում էր մշակութային կենտրոն, որտեղ ներկայացվում էին ցուցադրություններ, կրթական, մշակութաժամանցային ծրագրեր: Թանգարանն ունենում էր տարեկան ավելի քան 10000 այցելու :

**Պրոֆեսոր Գր. Գաբրիելյանցի անվան երկրաբանության
պետական թանգարան**

Թանգարանը հիմնադրվել է 2014 թվականին պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի նախաձեռնությամբ, ով այդ նպատակով Արցախին է նվիրել հանքաքարերի, լեռնային ապարների և օրգանական բրածո մնացորդների իր անձնական հավաքածուն, որն ընդգրկում է 480 ցուցանմուշ՝ աշխարհի 48 պետություններից և ՌԴ 20 երկրամասերից:

Ցուցադրության են ներկայացված նաև Արցախի տարբեր շրջաններից հավաքագրված հանքաքարեր և օգտակար հանածոներ:

Թանգարանը տեղակայված է նախկինում «Կանաչ դեղատուն» կոչվող շենքում:

Շուշիի պատմության թանգարան

Թանգարանի հավաքածուն ներկայացնում է հայոց հինավուրց բերդաքաղաքի հասարակական կենցաղը, հոգևոր մշակույթն ու պատմությունը, նեոլիթյան ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Թանգարանի ֆոնդը բաղկացած է ավելի քան 5000 ցուցանմուշից:

Թանգարանի ցուցադրանքից մեկում վերականգնված էր 19-րդ դարի շուշեցի մեծահարուստ Թադևոս Թամիրյանի բնակարանի ներքնատեսքը:

Շուշիի գորգերի թանգարան

Թանգարանը հիմնադրվել է 2011 թվականի սեպտեմբերի 2-ին՝ Արցախի Հանրապետության անկախության հռչակման խորհրդանշական օրը: Թանգարանի հիմնադիրն է Վարդան Ասծատրյանը: Թանգարանի հավաքածուն ներառում է հայտնի հայ գորգագործների կողմից ստեղծված հին գորգեր, որոնք բերվել են Հայաստանի և Արցախի տարբեր շրջաններից:

Մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը թանգարանն ունեցել է երկու հիմնական շենք: 2011 թվականին Շուշիում բացվել է թանգարան-հիմնադրամ, որի տարածքը տրամադրվել է ամերիկյան հովանավորների ջանքերով: Այնուհետև՝ 2012 թվականի օգոստոսին, մոսկվայաբնակ հովանավորի՝ Կարո Մարգարյանի կողմից անհատույց տրամադրվել է համապատասխան շենք՝ որպես գորգերի թանգարան:

Թանգարանում ցուցադրված են եղել ոչ միայն արցախյան գորգեր, այլ նաև ավանդական արհեստների հին առարկաներ, որոնք ստացել էին փորձագիտական գնահատական, անհրաժեշտության դեպքում վերականգնվել, ապա դրվել ցուցադրության:

Թանգարանում պահպանվում էին մոտ 860 ցուցանմուշ, որից 300-ը՝ Արցախյան զարդանախշերով հին գորգեր և կարպետներ՝ գործված 17-րդ դարից մինչև 20-րդ դարակիզբն ընկած ժամանակահատվածում: Մշտական ցուցադրությունը ներառել է թանգարանի մոտ 300 գորգերից 120-ը՝ «Վիշապագորգ», «Խնձորեսկ», «Աստղագորգ», «Ծաղկագորգ», «Արծվագորգ», «Ծաղկած խաչեր», «Պատկերագորգ» և այլն:

2020 թվականի հայ-ադրբեջանական պատերազմի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերի կողմից Շուշի քաղաքի ծանր հրետակոծության ժամանակ՝ հոկտեմբերի 29-ին, հրթիռի պայթյունի հետևանքով վնասվել են թանգարանի շինությունները: 2020 թվականի նոյեմբերի 1-ին հավաքածուի ամենաթանկարժեք նմուշները՝ մոտ 160 գորգ և կարպետ, հետագա ոչնչացումից փրկելու նպատակով տարհանվել են Երևան: Հավաքածուի մնացած հատվածը՝ 100–120 գորգ, ինչպես նաև ցուցադրված կենցաղային իրերը, խեցեղենը, բրոնզե դարի և քարե դարի առարկաները, որոնք չի հաջողվել տեղափոխել, մնացել են Շուշիում: